ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«26» ապրիլի 2019թ. № 289-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 82-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի քննչական, հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչությունների, ինչպես նաև այլ ստորաբաժանումների համագործակցության ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 82-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանով հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 3-րդ կետում «առաջնահերթ՝ համապատասխան որոշումը ստանալու օրվանից 10 օրյա ժամկետում, ինչն առանձին դեպքերում, համապատասխան հիմնավորմամբ կարող է երկարացվել ևս 20 օրով» բառերը փոխարինել «հնարավորինս սեղմ ժամկետներում» բառերով:

2) Հավելվածի 4-րդ կետում «ստուգման ակտը ներկայացվելուց և ակտով առաջադրված պարտավորություններն ակտն անբողոքարկելի դառնալուց հետո 10-օրյա ժամկետում չվճարվելուց հետո» բառերը փոխարինել «ստուգման ակտի կազմմանը հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 4/26/2019 19:35:58 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ